

ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

03.02.2016 14:05



Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը տեղեկացնում է, որ **2016 թվականի փետրվարի 20-ին (շաբաթ օր) ժամը 10:00-ից սկսած** նախատեսվում է փաստաբանների միջև կազմակերպել շախմատի մրցաշար:

Շախմատի մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, Մեծ դահլիճ):

Մրցաշարին մասնակցելու համար խնդրում ենք նախապես գրանցվել, որպեսզի փաստաբանների պալատը հնարավորություն ունենա մասնակիցների քանակին համապատասխան ապահովել մրցաշարի անցկացման համար անհրաժեշտ պարագաները (շախմատներ, ժամացույցներ և այլն):

Մրցաշարին մասնակցելու համար կարող եք գրանցվել **մինչև 2016 թվականի փետրվարի 17-ը ներառյալ**՝ info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու (հաղորդագրության մեջ խնդրում ենք նշել Ձեր անունը, ազգանունը, փաստաբանական գործունեության արտոնագրի համարը, ինչպես նաև բջջային հեռախոսահամարը) կամ 600-701, 600-702 հեռախոսահամարներով զանգահարելու միջոցով:

Մրցաշարի հաղթողների համար նախատեսվում են մրցանակային տեղեր:

ՀՀ փաստաբանների պալատի
մարզամշակութային ակումբ

Առաջարկվող նորություններ



20.02.2016 ՕԼԻՄՊԻԱԿԱՆ
ԿՐԿՆԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ
ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ
ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԽԱՂ Է
ԱՆՑԿԱՑՐԵԼ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ.
ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է
ՈՒՆԵՑԵԼ ՇԱԽՄԱՏԻ



Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })